Վարք Տարոնի

(Բաղալյան)

Նախաբան

Սույն գործը դրվագ է տասներորդ դասարանի իմ կյանքից։ Դեպքերը ծավալվում են իմ դասընկեր Բաղալյան Տարոնի և մեր ֆիզիկայի ուսուցիչ Մæրæթ Գալըզդեանի շուրջ, ում մոտ մասնավոր պարապում էր Տարոնը, ինչպես նաև մեր դասընկերուհի Սիրբաբրփուկը։ Տարոնի խոսքը գրված է նրանից լսած պատմությունների հիման վրա։

Գյալզդյանը առանցքային կերպար էր մեր ուսուցիչների մեջ. նա և՛ սովորական էր իր օփել վեկտրայով ու տետրերով լի պայուսակով, և՛ տարօրինակ իր կախ մռութով ու յուրահատուկ խոզելաւուոջով։ Նրան են պատկանում դազդեգ, արեքագ, երգյուզ, էթ, գձագիրը գձի, խրախուսական իերեգ և մի շարք այլ գոհարներ։

***

Խոսք Տարոնի, 18.04.2017

«Դուրս եկա «5» համարի մառշուտկայի միջից ու անցնելով փողոցը քայլեցի դեպի տասնյոթ տոլի քսանյոթ համարի շենքը։ Քանի որ էդ շենքի դիմացի պադեզդում միշտ լճացած էր լինում անձրևաջրից կուտակված կեղտոտ հեղուկը, ես՝ այլևս ճանապարհս կրճատելով մոտ 300 մետրով, միանգամից մոտեցա հետևի մուտքին, որտեղ պատի տակ միշտ ծանր-ծանր վեր էր ընկած մի մեքենայի մատոռ։

Քանզի ձմեռ էր, ուստի ամոթանք կլիներ էդ շենքին, եթե պադեզդը կարգին չսառցակալեր։ Իրիկունները սառույցն ամրապնդվում էր, իսկ ցերեկները ջուրն էր ողողում գոգավոր պադեզդը։ Հենց որ շենքի բնակիչները նկատում էին հալվածքի առաջին ջոկատները, համատեղ ուժերով լապատկեքով հարձակվում էին ջրի վրա ու դուրս լցնում պադեզդից, որ իրիկունը սառույցի համար սնունդ չմնա։

Ես մի կերպ ճողփեցի անձրևաջրի գոյացրած լիճը ու կանչեցի խարխուլ լիֆտը, որի տակ անդադար հոսում էր լճից սկիզբ առնող գետը, ու եթե հանկարծ մարդու բախտը չբերեր՝ տեղնուտեղը տոկը կխփեր։ Վերջապես լիֆտը ճռվողյունով ժամանեց։ Մտա ներս ու սեղմեցի վեցերորդ հարկի կոճակը։ Ներսում վառվում էր, ավելի ճիշտ՝ մարում էր մի հատ մահամերձ ճրագ։ Հատակին ճապաղված էր կլինգոր, որը լի էր պադեզդից ներծծված ջրով։

Լիֆտը մեկ բարձրանում էր վերև, մեկ ռեսկի իջնում ցած։ Ու էս ցատկերից հետո՝ մարդուս սիրտը լեղաճաք անելուց հետո բացվեցին լիֆտի դռները։ Ես՝ առանց էդ էլ թրջված, միանգամից երկրորդ լոգանքն ընդունեցի պադեզդում ու կանգնելով դռան դիմաց զանգեցի այն։ Դուռը բացեց մի միջահասակ, ոչ չաղ, ոչ նիհար, ճակատի մասում թափված մազերով, տխուր բուլդոգի դեմքով մոտ մի վաթսուն քանի տարեկան մարդ։ Մենք բարևներով փոխանակվեցինք ու ես մուտք գործեցի Գալըզդեան Մէրէթի տուն։

Ես՝ ըստ ձևավորված ավանդույթի, կոշիկներս հանեցի ու հագա Գալըզդեանի տված տապչկեքը, որ չկեղտոտվի տունը։ Ես անցա իրանց զալ, որը մեր դասարանի կեսից փոքր էր, որ Էդոն ամբողջությամբ չէր տեղավորվի։ Նստեցի սեղանի շուրջ՝ մյուսների կողքին։ Պահ մի հետո եկավ և Գալըզդեանը։ Ես իմ հարցերը տվեցի ու ինձ տրված հանձնարարությունը սկսեցի գրել։

Որոշ ժամանակ հետո, ավելի ճիշտ՝ ժամը ուղիղ վեցը հենց որ խփեց, Գալըզդեանը կոֆե առաջարկեց մեզ։ Ասեմ, որ կային մարդիկ, որ հենց մենակ կոֆեի համար էին պարապում։ Դրանից հետո Գալըզդեանը դուրս գնաց զալից ու մի քանի րոպեից հետ եկավ՝ չայի բաժակով կոֆեն ձեռին։ Հինգ րոպե հետո էդ կոֆեի յոխն արդեն տված էր։

Պարապմունքի վերջանալուց Գալըզդեանը հանձնարարությունը տվեց ու մենք դուրս եկանք տնից։ Լիֆտը կանչեցինք, որ ըստ սովորության ալարեց շուտ ժամանել, ու մենք ոտ-ոտ սկսեցինք իջնել աստիճաններով։ Քայլեցինք կանգառ։ Հինգ րոպե չանցած «5» համարի մառշուտկեն եկավ։ Դեմը մի հատ տեղ կար ու ես փառք տվեցի Աստծուն դրա համար, քանզի «Թումո»-յի մոտից մառշուտկա հելածների ճնշումներից կարող ա խեղդվեի քրտնքի ու տոթի ճենճերահոտից։

Վերջապես հասանք Զեյթուն։ Ես իջա մառշուտկից, մի 150 մետր օբշի քայլեցի (փողոց անցնելը հաշված) ու հասա տուն։»

***

Խոսք Տարոնի

«Դուրս եկա «5» համարի մառշուտկից՝ դեռևս հիշելով ու խնդալով դրա շոֆեռի մոգոնած հումորների վրա, ու քայլեցի դեպի շենք։ Քանի որ էդ շենքի բնակիչները ինչ ժրռ ու ժեխ ասես չէին լցրել էն տռուբի մեջ, որով պիտի դուրս գար վերևից լցված անձրևաջուրը, ու էդ տռուբեն էլ ծռել էին ընենց, որ միջինը լցվի զիբիլի մեջ, անտանելի ժահահոտ էր ողողել պաղեզդի սահմանները, որովհետև նոր էր անձրև եկել ու սաղ կեղտաջուրը լողացրել էր զիբիլը։ Մինչև կիսափուլ լիֆտը կժամաներ, անուշավետ բուրմունքն արդեն պարուրեց ինձ ու ես հազս զսպելով ներխուժեցի լիֆտ։ Ես՝ վայելելով փրկության կարոտալի վայրկյանները, նորից զգացի թունավոր ճենճահոտը։»

***

Խոսք Տարոնի, 26.04.2017

«Դասի էինք։ Ես Սարոյին հայտնեցի, որ հինգշաբթվա ֆիզիկայի գրավորը տաս ա ստանալու։ Ինքը նայեց իմ ինքնագոհ ու ինքնավստահ հայացքին, բայց բան չչոկեց։»

***

Խոսք Սարոյի

«Չորեքշաբթի, անգլի ժամ։

Ես ու Տարոնը տեղավորվեցինք լուսամուտի տակի շարքի վերջին նստարանին ու Տարոնը սումկի խառնիճաղանջ ու բազմաբղետ գրքերի ու տետրերի միջից հանեց անգլի տետրը, որի էջերից մեկի մեջ թաքնված էին հաջորդ օրվա ֆիզիկի գրավորի հարցերն ու խնդիրներն՝ իրանց պատասխաններով։ Ես սկսեցի շտապ նշումներ անել մոտս՝ ականջի ճոթով ունկ դնելով Տարոնի բացատրություններին ու նկատողություններին։

Հանկարծ լսվեց անգլի դասատուի ձենն ու ես հապճեպորեն սկսեցի անգլի տնայինն արտագրել Տարոնի տետրից, բայց սավսեմ ի զուր, քանզի հենց դասատուն մոտեցավ մեզ, ըսկի աչք էլ չնետեց մեր տետրերին, այլ բավարարվեց մեր հաստատողական պատասխանով իրա «տնայինն արե՞լ եք» հարցին ու անցավ մյուս շարք։ Ես նորից սկսեցի փութկոտ արտագրել ու գործս վերջացնելով թեթևացած սկսեցի հետևել Տարոնի ու Էրոյի գյալաջիին, ավելի ճիշտ՝ քյալլին։ Էրոն ուղիղ իմ դեմից կիսաոլորվեց դեպի մեզ ու ասեց. «Տարո՛ն, հորս արև բեզ կռուտիտ հենց նայեմ վրեդ չպիտի խոսաս» ու դասատուի դիտողություններից հետ շրջվեց։ Ես քրքջալով ասեցի՝ հեսա Էրոն հայելի ա պահելու դեմն ու ըտենց նայի Տարոնին։ Ու իրոք, խոսքս նոր էի վերջացրել, երբ Էրոն Սերոժի պլանշետը բարձրացրեց իրա դիմաց ու չերեզ դրա ատռաժենիե նայեց Տարոնի աչքերի մեջ։ Երևի ավելորդ ա ասել, որ Էրոյից երկու մետր շառավղով սաղ մարդիկ ուժե բացել էին։

Տարոնը մի հատ թղթի կտոր պահեց աչքերի դեմն ու մի քանի քֆրտոց ուղղեց Էրոյին։ Էրոն ֆռաց ու երդում կերավ, որ Տարոնը էդ թուղթը տա իրան։ Տարոնը տվեց, բայց անմիջապես անցավ մատերով քֆուրներին։ Էրոն մի հատ երդում էլ ըդտեղ կերավ, որ Տարոնը նույնիսկ ժեստերով չքրֆի։ Մենք արդեն ծիծաղից տրաքել էինք։

Էրոն՝ չբավարարվելով, ասեց. «Տարո՛ն, հենց մատով ճտցնեմ, կմկկաս»։ Էրոն ճտցրեց ու ծիծաղի թազա պոռթկում հաջորդեց Տարոնի բառաչին։ Էրոն մի երկու երդում էլ ավելացրեց մինչև դասի վերջ, ու Տարոնն արդեն քսաներորդ անգամ Էրոյին սպառնաց՝ հաջորդ օրվա գլխին գալիքների մասին։

Դպրոցի դարպասներից դուրս գալուց հետո այլևս Տարոնից ու Էրոյից բաժանվեցի։»

***

Խոսք Տարոնի, 27.04.2017

«Նշված դեպքերից մի քանի օր առաջ՝ ֆիզիկի պարապմունքի ժամանակ։

Ուշադրությունս գրավեց Գալըզդեանի դիվանին դարսված թղթերի կույտը։ Մեր հետ պարապում էր նաև մի տասնմեկերորդ դասարանցի, ու երբ ինքը Գալըզդեանից ստացավ հանձնարարություն՝ կապված գրավորի տարբերակի հետ, ինքը ուզեցավ դիվանի թղթերի կապոցը վերցնել, բայց Գալըզդեանը հայտնեց, որ դրանք տասերի թեստերն են։

Երբ Գալըզդեանը դուրս եկավ կոֆեի հետևից, ես անմիջապես նկարեցի երեսի տարբերակը։ Տասնմեկերորդ դասարանցին ինձ հայտնեց, որ իրանց՝ անցած տարվա գրավորների սաղ տարբերակներն ունի, ուղղակի ֆեյսբուքի սաբշենիներում ա։ Ես ջոկեցի, որ ռոյալ սթրիթ ֆլեշ եմ բռնել։ Էդ նույն ժամանակ Սիբրաբրփուկը գողեգող սաղ տարբերակները նկարեց, ու Գալըզդեանը պահ մի հետո վերադարձավ՝ չայի բաժակով կոֆեն ձեռին։

Էս միջադեպից հաշված օրեր հետո ես Սիբրաբրփուկին ֆեյսբուքով համոզում էի, որ տարբերակների նկարներն ուղարկի ինձ, ու ֆեյսբուքով մղված ճակատամարտից հետք քիչ էր մնում վերջնականապես մերժեր խնդիրքս, բայց դրան հաջորդող առֆեյսբուք «ներողություն»-ից հետո վերջ ի վերջո հասա նպատակիս։»

***

Խոսք Սարոյի, 29.04.2017

«Հինգշաբթի, ֆիզիկի գրավորի օր։

Տարոնի վիզը բռնվել էր։ Ցավից մռռում էր։ Դրա նախորդ շաբաթը Էրոն գնացել 10դ-ի հետ հոթ դոգի վրա գրազ էր եկել ու էսօր պիտի ֆուտբոլ խաղային երկար դասամիջոցին։ Իմ մտքից էդ սավսեմ թռել էր, ու ես երբ գնացի խաղը նայելու, արդեն 3-1 կրվում էինք։ Տարոնը՝ չնայած վզի ցավին, հելավ խաղաց ու հաշիվը դառավ 5-5։ Պենալներ խաղացին ու մերոնք գրազը կրվան։

Ֆիզկուլտին ֆուտբոլ խաղացինք։ Ֆիզիկի գրավորին ամենաուշը ես հասա՝ քրտնաթոր, քրտնխաշ, կարմրած դեմքով, որովհետև ֆուտբոլի խաղից հետո ուշ էի փոխվել։ Տարոնի

կողն զբաղված էր ու ես նստեցի ամենադեմը։ Ամենաշուտը վերջացնելով՝ դուրս եկա դպրոցից ու այլևս չտեսա Տարոնին։»

***

Խոսք Սարոյի, 22.05.2017

«Հենց որ ֆիզիկայի ժամի զանգը խփեց, ոչ մեկը շան տեղ չդրեց, քանզի դպրոցի առաջին հարկի միջանցքում խմբվել էին խառնիճաղանջ բազմություններ, որոնք հավաքվել էին իրանց դազարաններով նկարվելու։ Երբ վերջապես մի քանի մալալետկա դասարաններից հետո մեր հերթը հասավ, մենք ճեպեցինք շարվել։ Բայց մեզ վիճակված չէր էդ գործողությունն իրականացնել առանց պատուհասների, քանզի էնքան իրար կերան հետևի բարձր շարքում կանգնելու համար, որ մուտքի դեմի լայնաչափ նկարը կտապալվեր գետնին, եթե չլինեին հետևի բարձր շարքում կանգնած տավարները։ Մինչև դազդեգն ու ֆոտոգրաֆը ծայրագույն ճիգերից հետո կարողացան մեզ դասավորել, ստացվեցին երեք հատ անտիկվար նկարներ։

Ֆիզիկայի ժամից արդեն անցել էր քսանյոթ րոպե, բայց Գալըզդեան Մæրæթը՝ ձգտելով իր հանապազօրյա երգյուզները նշանակել, փութաց դասարան։ Մենք հուսահատ գրավեցինք մեր տեղերը պառտեքին ու դասի վերջին մի քանի րոպեները վեճիվատ արինք։

Մենք դժվար թե դիմանայինք, եթե չլիներ մի օգնող հանգամանք. Գալըզդեանի գալուց մի քանի տասնյակ վայրկյան հետո ես մեջքիս զգացի Հ. Արեգի ձեռքի ջախջախիչ հարվածները, որոնք ես հասկացա որպես կայֆավատ առ զիս ու մարտականորեն ֆռացի դեպի Արեգը՝ մինչև էդ որոշելով, թե ինչ ուդառով (ուդառներով) վրեժս լուծեմ, բայց Արեգի թևաթափ հայացքը իմ ուշադրությունը սևեռեց դեպի Գալըզդեանի դեմքը, ու ես տեղում զգացի Գալըզդեանի դեմքի անդնդախոր փոփոխությունը. ինքը առել էր նոր՝ ուղղանկյուն ակնոց։ Ես հետ ֆռացի ու գտա Արեգին սեղանի վրա տապալված քոքռալուց։

Վերջապես փրկարար զանգը տվեց ու էս անգամ էնքան էլ տհաճ չէր դրա ականջ ծակող ղողանջյունը (առաջին հարկի զանգը գտնվում էր մեր դազարանի դռան վերևում), քանզի մենք սուրացինք ֆուտբոլի։»



Նկարում՝ Մյարյաթ Գյալզդյան
Հեղինակ՝ Էրեջ Երևանցի